





ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՆԱՐԵԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ԱԿՆԱՅ ԵՒ ԹԵՄԵՐՈՒ

ՀԱՐԱՐԱՆՈՐ Բ. ՔՐԵՄԵՆ Ի ԹԻ

ՀԻՄՆՈՒԱԾ 1908 ՆՈՅԵՄԲԵՐ 1, Կ. ՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՈՒԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԻՍՅԱՆ

1909

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՆԱՐԵԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱԿՆԱՅ ԵՒ ԹԵՄԵՐՈՒ

Ն Պ Ա Տ Ա Կ

Ակնայ եւ թեմերու նարեկեան ընկերութիւնը հաստատուած է 1908 ին ի Կ. Պոլիս, Ակնցիներու նախաձեռնութեամբ. նպատակ ունի. Ա. - Ակնայ եւ թեմերուն (Կամարակապ, Ապուշեխ, Կարուշլա, Լիճք, Բինկայ եւ Նարվեր գիւղերու) Ազգային երկսեռ վարժարաններուն նպաստել եւ նոյն վարժարանները յաճախող չքաւոր ուսանողներու զրեւական պէտքերը հոգալ: Երբ ընկերութեան նիւթական միջոցները ներեն, ուսումնականին համընթաց՝ արհեստական կրթութեամբ ալ օժտել ուսանողները:

Ա Ն Դ Ա Մ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1<sup>o</sup>. Ամէն Հայ կրնայ անդամակցիլ ընկերութեան՝ վճարելով ամսական մէկ դահեկան առ նուազն: Մէկէ աւելի բաժիններ ալ կարելի է ստորագրել:

2<sup>o</sup>. Պարտաւորութեամբ կ'արձանագրուին անոնք որ

6731 թ. 4,



տարեկան առ նուազն երկու ոսկի կը նուիրեն Ընկերութեան :

3°. Ընկերութեան Բարեկարգի անուն կը ստանան անոնք որ մէկ անգամէն կարեւոր գումարով մը, կտակով մը կամ որ եւ է նուիրատուութեամբ մը կը մասնակցին :

4°. Ամէն անդամակից կամ բաժանորդ պարտականութիւն կը ստանձնէ տարուան մէջ նոր բաժանորդ մը գտնել :

5°. Այն բաժանորդները որ կը դադրին բաժանորդութենէ, իրենց վճարած գումարը ետ պահանջելու իրաւունք չունին :

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Ի Ի Ն

6°. Ընկերութիւնը ունի երեք մնայուն ժողովներ .

Ա.— Ընկերութեան Ժողով, զոր կը կազմէ Ընկերութեան բաժանորդներու մեծամասնութիւնը :

Բ.— Ներկայացուցիչներու Ժողով, զոր Ընդհ. Ժողովը կ'ընտրէ, չորս տարին անգամ մը, իր անդամակիցներու թիւին 10% համեմատութեամբ :

Գ.— Գործադիր Ժողով, զոր կ'ընտրէ Ներկայացուցչաց ժողովը իր մէջէն կամ Ընկերութեան բաժանորդներէն :

7°. Ընդհ. Ժողովի պաշտօնն է՝ չորս տարին անգամ մը Ներկայացուցիչներու ժողով ընտրել՝ մեծամասնութեամբ գումարուելով եւ կամ գրաւոր քուէարկութեամբ :

8°. Ներկայացուցիչներու ժողովին անդամներու թիւը, հրաժարումով եթէ  $\frac{2}{3}$  էն նուազի, այդ պակասը լրացնելու համար Ընդհ. Ժողովի քուէին դիմելու է :

9°. Ներկայացուցիչներու ժողովը օրինաւոր կ'ըլլայ երբ անդամներու կէսէն աւելին Ներկայ է :

10°. Ներկայացուցիչներու ժողովը պաշտօն ունի . Ա.— Ընտրել Գործադիր ժողովը : Բ.— Անոր գործառնութեանց հաշիւները քննել եւ վաւերացնել : Գ.— Ընկերութեան ելեւմտացոյցը վաւերացնել : Դ.— Ընկերութեան կանոնագրին եւ նպատակին անթերի գործադրութեան հսկել :

11°. Ներկայացուցիչներու ժողովը իր մէջէն կ'ընտրէ իր դիւանը՝ Ատենապետ եւ Ատենադպիր, քուէներու մեծամասնութեամբ :

12°. Ներկայացուցիչներու ժողովը կը գումարուի տարին գոնէ մէկ անգամ, բայց ի հարկին բացառիկ նիստեր ալ կ'ունենայ :

13°. Գործադիր ժողովը կ'ընտրուի Ներկայացուցիչներու ժողովէն՝ անդամներու մեծամասնութեան գաղտնի քուէներովը :

14°. Գործադիր ժողովը կը բաղկանայ 7 անդամներէ եւ իր պաշտօնավարութիւնը կը տեւէ մէկ տարի :

15°. Գործադիր ժողովին անդամները վերընտրելի են :

16°. Գործադիր ժողովին պաշտօնն է՝ Ընկերութեան նպատակին գործադրութեան համար կարեւոր եղած ամէն միջոց եւ ձեռնարկ ի գործ դնել, բաժնե-

զիններու ամսէ ամիս եւ կանոնաւորաբար զանձումը կատարել՝ մասնաւոր հաւաքիչի մը ձեռքով, Ընկերութեան եկամուտներն աւելցնելու հոգ տանիլ, թատերական ներկայացումներ, հանդէսներ, վիճակահանութիւններ կազմակերպել եւ անոնցմէ Ընկերութեան հասոյթ ձեռք բերել: Ընկերութեան պահեստի դրամը ապահով ձեռքերու մէջ պահել, իսկ նպատակին գործադրութեան սահմանուած բաժինը՝ պէտքերու եւ պարագաներու համեմատ գործածել թէ Ակնայ եւ թէ թեմերուն համար:

17°. Գործադիր ժողովը այս նպաստի բաշխումը կատարելու համար միշտ յարաբերութեան մէջ պիտի գտնուի Ակնայ եւ թեմերու Ազգային եւ դպրոցական վարչութեանց հետ եւ անոնցմէ ստացած վաւերական տեղեկագիրներուն ու վիճակագրութիւններուն վրայ կը տնօրինէ կարեւոր եղած միջոցները:

18°. Գործադիր ժողովը հոգ կը տանի որ Ակնայ եւ թեմերուն Ազգ. Վարժարանները բարւոք եւ կանոնաւոր ընթացք ունենան, կրթական, արհեստական նպատակայարմար ծրագրի մը հետեւին եւ ժողովուրդին զաւակները կրթութեան բարիքները վայելեն անխտիր, մանաւանդ աղքատիկ ուսանողները դպրոցական պիտոյքներէ զուրկ չը մնան:

19°. Գործադիր ժողովը կ'ունենայ իր դիւանը, մէկ Ատենապետ եւ մէկ Ատենադպիր, նաեւ մէկ զանձապետ, մէկ համարակալ եւ երեք խորհրդական անդամներ:

20°. Գործադիր ժողովին անդամները իրենց

ստանձնած պաշտօնին համար թէ անհատաբար եւ թէ հաւաքաբար պատասխանատու են ներկայացուցիչներու ժողովին առջեւ:

21°. Գործադիր ժողովը ի հարկին կրնայ Մասնախումբեր ընտրել՝ անոնց աջակցութենէն օգտուելու համար ի նպատ Ընկերութեան որ եւ է մէկ ձեռնարկին յաջողութեան:

22°. Եթէ մէկ տարուան ընթացքին մէջ Գործադիր ժողովէն երեք անգամ հրաժարին, Գործադիր ժողովին դիւանը ներկայացուցիչներու ժողովի Դիւանին կը զեկուցանէ եւ անոր հետ համախորհուրդ ներկայացուցիչներու ժողովը նիստի կը հրաւիրուի՝ պակասեալներուն տեղ նոր անդամներ ընտրելու համար: Այս նորընտիր անդամները Գործադիր ժողովի միւս անդամներուն հետ որոշեալ պայմանաժամին մէջ կը դադրին:

23°. Գործադիր ժողովը իր գործառնութեանց համար կանոնաւոր արձանագրութիւններ եւ հաշուետոմարներ ունենալու, իր զանձումները ու վճարումները պաշտօնական ընկալագրով կատարելու պարտաւոր է:

24°. Գործադիր ժողովին տոմարները ներկայացուցիչներու ժողովին կողմէ կնքուած եւ վաւերացուած ըլլալու են:

25°. Ընկերութեան կեդրոնը Պոլիս ըլլալով հանդերձ՝ Գործադիր ժողովը Ակնայ եւ թեմերուն մէջ ալ կրնայ իր Մասնաճիւղերը ունենալ, որոնց ձեռքով Ընկերութեան բաժանորդներուն թիւը եւ հասոյթի աղբիւրները աւելցնելու հետամուտ կ'ըլլայ. այս Մասնա-

ծիւղերը համարատու են Գործադիր ժողովին եւ տեղական դպրոցական խնդիրներուն ուղղակի միջամտելու իրաւասութիւն չունին :

26°. Գործադիր ժողովը իր փորձառութեամբ եւ պարագաներու պահանջման համեմատ կը պատրաստէ ներքին կանոնագիր մը եւ յարակից հրահանգներ, իր գործառնութիւնները ճշդելու համար. այդ ներքին կանոնագիրը ներկայացուցիչներու ժողովին վաւերացման կ'ենթարկուի առաջին առիթով :

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

27°. Ինչ որ ալ ըլլայ Ընկերութեան նպատակը անփոփոխելի է, եւ հասոյթները այդ նպատակին գործադրութեան պէտք է յատկացուին :

28°. Ընկերութեան հասոյթին 90% ը կը գործածուի Ընկերութեան նպատակին գործադրութեան, հընչուն դրամով կամ դասագիրքով եւ դպրոցական պիտոյքով : Այս պէտքերուն հայթայթման համար զիւղերու եւ քաղաքի խնդիր եւ խտիր չը պիտի ըլլայ :

29°. Ընկերութեան հասոյթին 10% ը պահեստի գումար ըլլալով անձեռնմխելի կը մնայ, Գործադիր ժողովի պատասխանատուութեան տակ՝ կը շահագործուի կալուած գնելով կամ պաշտօնական դրամատան մը տոկոսի տալով. այս կերպով գոյացած շահը դարձեալ նպատակին գործադրութեան կը յատկացուի : Կալուած գնելու համար Գործադիր ժողովը պարտաւոր է նախա-

պէս ներկայացուցչաց ժողովին հաւանութիւնը ստանալ : 30°. Ներկայ կանոնագիրը կրնայ բարեփոխուիլ չորս տարին անգամ մը, առանց փոխելու անոր ոգին ու նպատակը :

31°. Եթէ օր մը նարեկեան այս Ընկերութիւնը լուծուի իր գոյքերն ու մնացած դրամագլուխը կը յանձնուին Ակնայ Առաջնորդարանին որ զանոնք կը շահագործէ Ընկերութեան նպատակին :

Կ. Պոլիս, 30 Յունիս 1909

Ի Դիմաց Նարեկեան Ընկերութեան Ներկայացուցչաց ժողովին

Ա. Կենտրոն	Ա. Կենտրոն
Մ. ԴԱԻԹԵԱՆ	Յ. ԳՈՐԵԱՆ

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.









Р. У.

№ 6731